օրէնութիւն գործել, զոր գրեալ կայ ի գրիս: Իսկ բարեգութ և մարդասէրն Աստուած վասն այսչափ Նորա անօրէն չարագործութեանն համբերեաց, և ոչ ի նոյն ժամու զնա պատուհասեաց. նայ և մեզ ետ համբերութիւն մինչև իսպառ. յաւել իւր բարձր բազկաւ և հզօր ձեռամբ յարուցանել ի վերայ նորին անօրէնութեան դէմ զայս ինչ.

Որ Տեսքոթ անուն դուքս յայտնեցաւ ի յաշխարհն ֆրանգաց առ քրիստոնէից կայսրն, որ կոչի Ֆերտինանտ. և եկաց առ նա ի մանկութենէ հասակէ մինչև ի չափ կատարեալ հասակի. ապա յետ այնորիկ եգիտ իւր արժան զոմն մեծ իշխան՝ որ կոչի Վլասքիյ. և էր ի Լեհից աշխարհէն այդ Վլասքին, և ընդ նմա միաբան և համախոհ եղեւ: Եւ էր այս Տեսքոթն դուքսն կարի աղքատ և անզօր. վասն զի անօրէն ազգն Իսմայէլացիքն որք կոչին՝ զնորա հայրենիքս ափշտակել էին զամենայն ինչ. և ապա այս բարեպաշտ ոմն որ

Ի Սէչովա ջրեզերին
Զաթանէտուն [1] սահմանեցին,
Եւ ի վերայ չատ ծեղ լըցին,
Փոքրիկ գունակ իրեն Թողին:
Կրկին ասաց Հայոց ազգին,
Թէ ով չմտնէ հաւատ Հռոմին՝
Լընում ըղձեղ յայս տան միջին
Ի ի հուրն այրեմ զամենեսին:
Քահանայք և աշխարհական
Կանայք աղջկունքն ամենքեան՝
Բոլոր սրտիւ յօժարեցան,
Ի հուրն այրէին միաբան [2]:
Այն անիծած ամբարտաւան
Օլախ ազգին չար Վոյվոտան,
Եսես Հայոց ազգըն լըման՝
Որ այրմանէ ոչ վախեցան.
Զար հրաման եհան կրկին,
ԶՀայոց ազգըն ժողովեցին,
Ըզվոյթ, պրկար, զերեցանին,
Զկանայք, աղջկունքն ի միասին.
Պեղծ անիծած չար Օլախնին
Զնոքա ճոթով մերկացուցին,
Հռոմի հաւատ դաւանցուցին,
Եւ ակամայ մըկըրտեցին:
Պարոնն ասաց. Ես իշխան եմ,
Եւ չարաչար ըղձեղ տանջեմ.
Զեաւուխդ կտրեմ, զաչվիդ հանեմ,
Դարձեալ կրկին ըղձեղ կնքեմ:

Զոմանց մօրուքն ածիլեցին,
Զոմանց մազերըն կտրեցին.
Անտանելի չարչարեցին,
Ցեաղ կրկին մըկըրտեցին,
Զաբեղաներն և զերեցին:
Զըլէչներն [3] ածիլեցին,
Հռոմի հաւատ մըկըրտեցին,
Աշխարհականի կերպ հագուցին.
Զեպիսկոպոսըն բըռնեցին,
Մազն և մօրուքն ածիլեցին,
Եւ հաւատոց զէնքըն հանեցին,
Եւ մեծ փողպատ վիզն ագուցին:
Զկանայք լալով տանէն հանին,
Եւ պաղջիկներն ի միասին.
Զամենեսեան մկրտեցին,
Հռոմի հաւատ դաւանցուցին.
Զգըլխընհերուն հագուստ առին
Եւ զանձներուն ըղչուպանին [4],
Ի Օլախի կերպ ագուցին
Ու ի գլըխնին տոլպանտ դըրին:
Զտանն տապչանքըն [5] քակեցին,
Զհանդըստատեղն աւերեցին.
Օլախի պէս սահմանեցին
Զտուն և զհանգիստ Հայոց ազգին:
Օլախ իրիցներ չուրջ եկին
Եւ զՀայերուն տուն օրհնեցին,
Տանտանեղ [6] և զգաւաթնին
Օրհնած ջըրով լուանալ տուին:

1. Փայտաշէն խրճիթ, հիւղ։
2. Միւս Օ. Թէ հուրն այրէնք մենք միաբան:
3. Ըղկուլակ:
4. Այլ Օ. չապիկն հանին:
5. Մահճակալք, անկողինք:
6. Միւս Օ. Ըսպամաններն: